

«Բժշկական խորհրդատու» ապահովագրական պրոդուկտի համառոտ տեղեկատվական թերթիկ

«Բժշկական խորհրդատու» պրոդուկտն իրենից ներկայացնում է բժշկական գործընթացներն ուղղորդող և համակարգող, որն ապահովում է բուժման համար անհրաժեշտ միջոցների խնայողություն: Այն իր մեջ ներառում է ծառայությունների հետևյալ ցանկը՝

- «Երկրորդ կարծիք» ծառայություն - մասնագիտացված բժիշկների հետ (առցանց կամ հեռախոսով) ավելի վաղ տրված ախտորոշման վերաբերյալ հեռահար խորհրդատվություններ, սակայն ոչ ավելի, քան 3 անգամ պայմանագրի գործողության ժամանակահատվածում,
- Ապահովագրվածի հարցումով բժշկական հաստատությունների և բժիշկ մասնագետների ընտրում հաշվի առնելով բժշկական ցուցումները,
- Պլանային բուժման կազմակերպում արտերկրում (ՌԴ կամ ամբողջ աշխարհի (եթե ապահովագրական տարածքը ամբողջ աշխարհն է)),
- Ապահովագրության պայմանագրի շրջանակում կազմակերպված բուժման արդյունքում բժշկական մանիպուլյացիաների, գործընթացների, վիրահատությունների արդյունքում առաջացած բարդացումների բուժում,
- Հոգեբանների կողմից հեռահար խորհրդատվություն՝ հիվանդության կամ առողջական վիճակի հետ կապված հարցերով:

Դիմումների քանակը անսահմանափակ է. բացառությամբ «Երկրորդ կարծիք» ծառայության - 3 անգամ
Ապահովագրական փարածք - Ամբողջ աշխարհի կամ Ռուսաստանի Դաշնություն՝ հաճախորդի ընտրությամբ
Ապահովագրական գումար - 12.000 Եվրո:

Ծրագրի շրջանակներում կատարվում է միայն բժշկական ծառայությունների կազմակերպում, իսկ բժշկական ծառայությունների ստացման համար վճարում է Ապահովագրվածը:

Ինչպես է աշխատում ծրագիրը

Ապահովագրվածը զանգահարում է Սպասարկող կազմակերպության +37460465966 շուրջօրյա հեռախոսահամարով

- **Տեղեկատվական խորհրդատվություններ** - Բուժվահանակի բժիշկները 24/7 սկզբունքով խորհրդատվություն են տրամադրում Ապահովագրվածին
- **Բուժօգնության համակարգում** - մասնագիտացված բժշկի պահանջով Ապահովագրվածը պետք է ներկայացնի բժշկական փաստաթղթերի սքանավորված կրկնօրինակները՝ ուղարկելով դրանք med@nhs.moscow էլ. հասցեին: Բուժվահանակի բժիշկները կազմակերպում են բժշկական ծառայությունները ՌԴ-ի կամ արտերկրի բժշկական կազմակերպություններում (համաձայն ընտրված փաթեթի):
- «Երկրորդ կարծիք» ծառայություն՝ բժիշկները կազմակերպում են առցանց խորհրդատվություն (առցանց կամ հեռախոսով): Խորհրդատվություններն իրականացվում են Ապահովագրվածի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերի և տեղեկատվության հիման վրա: Առցանց խորհրդատվության հիման վրա բժիշկ-խորհրդատուն կազմում է գրավոր եզրակացություն և էլ. հասցեով այն ուղարկում Ապահովագրվածին:
- **Բարդացումների բուժում**՝ բուժվահանակի բժշկի պահանջով Ապահովագրվածը med@nhs.moscow էլ. հասցեին է ուղարկում անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը և տեղեկատվությունը (առկայության դեպքում):

Ապահովագրական պայմանագրի գործողությունը կարգավորող պայմաններին ավելի մանրամասն ծանոթանալու համար կարող եք այցելել www.rgs.am կայքը: